**Ժաննա Ղալթախչյանի ելույթի տեքստը**

Այսօր, այս կարևոր օրը, ես՝ որպես տիկին Մարդանյանի նախկին ուսանող և այժմ, ի ուրախություն ինձ, նաև գործընկեր, երախտիքի խոսք եմ հղում նրա ներկա և նախկին բոլոր ուսանողների անունից: Տիկին Մարդանյանի դերն անգնահատելի և անփոխարինելի է եղել բոլորիս կյանքում: Մանկավարժության և ֆրանսերենի անմնացորդ նվիրյալ, համբերատար ու իմաստուն դասախոս է եղել տիկին Մարդանյանը, լավ օրինակ՝ մարդու բոլոր կոչումներում: Նրա յուրաքանչյուր դասը նոր դռներ է բացել մեր առջև մասնագիտական և մարդկային կյանքի տարբեր իրավիճակներում: Նա քաջության և ուժեղ կամքի մարմնացում էր, ամուր հենք՝ իր ուսանողների և առաջին քայլերն անող մասնագետների համար: Լույս էր, լույս էր տարածում: Իմ և բոլոր նրան ճանաչողների պարտքն եմ համարում նրա գործն արժանապատիվ շարունակելն ու գալիք սերունդներին տիկին Մարդանյանի գործունեությանը ծանոթացնելը: Նրա տված գիտելիքը մեզ համար ամուր հենք ու զենք է, նրա թողած գիտական ժառանգությունը դեռ երկար կծառայի մատաղ սերնդին:

Ինչպես մեծ բանաստեղծն է ասում՝

Գործն է անմահ, լավ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնեկ նրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

Aujourd’hui, ce jour important, comme l’ancienne étudiante et la collègue d’aujourd’hui de Madame Mardanian, Je tiens à exprimer ma plus profonde gratitude de la part de tous les étudiants de Madame Mardanian. Son rôle a été inestimable et irremplaçable dans notre vie. Elle a été  une pedagogue de français très dévouée, patiente et sage, un vrai exemple de titre humain. Ses leçons ont ouvert de nouvelles portes devant nous dans la vie professtionnelle. Elle était l'incarnation d'une forte volonté et de courage, un bon soutien pour ses étudiants et les professeurs qui venaient de commencer leur carrier. Elle était Lumière, répandant la lumière. Je considère qu'il est mon devoir et celui de tous ceux qui la connaissaient de poursuivre dignement son travail et de faire connaître aux générations futures les activités de

Mme Mardanian. Les connaissances qu'elle a apportées sont pour nous un soutien et une arme solide, l'héritage scientifique qu'elle a laissé servira longtemps aux générations futures.

Et je finis mon discours avec les mots de Hovhannès Tumanian:

L'œuvre est immortelle, je le sais bien
On en parle depuis des siècles,
Hier, à lui que dans ses affaires
Il vivra sans fin, sans arrêt.